ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Սվետա Հարոսյան, բյուջետային գործընթացի համակարգման վարչության բյուջետային գործընթացի վերլուծական մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ:

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ֆինլանդիայի Հանրապետություն, ք. Հելսինկի, 2024 թվականի դեկտեմբերի 8-ից մինչև դեկտեմբերի 12-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը.

Միավորված Ազգերի կազմակերպության ֆինանսավորմամբ իրականացվող «Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտներ և մասնակցային քաղաքականություններ» (DIPPA) ծրագիր:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Գործուղման նպատակն էր մասնակցել ՄԱԶԾ կողմից «Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտներ և մասնակցային քաղաքականություններ» (DIPPA) ծրագրի շրջանակում Հելսինկիում կազմակերպվող ուսումնադիտական այցին՝ մասնակցային քաղաքականության և ժողովրդավարական նորարարության լավագույն փորձերը ուսումնասիրելու, գնահատելու և դրանց կիրառելիությունը հայաստանյան համատեքստում դիտարկելու համար:

5. Քննարկված թեմաները.

- Մասնակցային նորարարությունների ֆիննական փորձի ուսումնասիրություն
- Հանդիպում-քննարկում Ֆինանսների նախարարությունում՝ նորարարության և մասնակցության էկոհամակարգերի վերաբերյալ

- Հանդիպում-քննարկում Արդարադատության նախարարությունում՝ Ֆինլանդիայում փաստերի վրա հիմնված և մասնակցային օրենքի մշակման վերաբերյալ
- Ծանոթացում մասնակցային քաղաքականության մշակման ֆիննական մոտեցման հետ
- Հանրային կառավարման նորացման ռազմավարության և ԵՄ համակարգի ուսումնասիրություն՝ այցելություն Ֆինլանդիայի վարչապետի գրասենյակ
- Հանդիպում-քննարկում Հանրային կառավարման ինստիտուտի տնօրենի հետ
- Տրանսպորտի պլանավորման և համագործակցության ռազմավարության քննարկում Հելսինկիի տարածաշրջանային տրանսպորտի վարչության աշխատակիցների հետ
- Մասնակցային նորարարությունների և ժողովրդավարության նոր ձևերի քննարկում/SITRA:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Ուսումնադիտական այցի մասնակիցներին ներկայացվել է Ֆինլանդիայի մասնակցային նորարարության առկա փորձը: Ուսումնադիտական այցի ընդգրկված թեմաների շրջանակներում իրականացվել են մասնակցային նորարարությունների վերաբերյալ քննարկումներ և մտքերի փոխանակում: Ներկայացվել են շնորհանդեսներ, որոնք քննարկվել են ուսումնադիտական այցի մասնակիցների հետ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Նախնական պայմանավորվածության համաձայն նախատեսվում է ստեղծել հարթակ՝ մասնակցային նորարարությունների Ֆիննական փորձի փոխանակման և քննարկումների շարունակականության ապահովման համար:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այդպիսիք առկա չեն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

17.12.2024թ.